Հաստատում եմ՝
Հայաստանի գեղարվեստի պետական
ակադեմիայի ռեկտոր՝
Վ. Ազատյան
_____
«_____» _____ 2025 թ.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵՎ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԱՍՊԻՐԱՆՏԱԿԱՆ ՔՆՆԱԿԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

Համաշխարհային արվեստ

1. Նախնադարյան մշակույթի և արվեստի ժամանակագրական ու աշխարհագրական ընդգրկումը, գլխավոր հուշարձանները։
2. Հին Եգիպտոսի արվեստ. զարգացման ընթացքը և առանձնահատկությունները ըստ թագավորությունների ժամանակաշրջանների, եգիպտական պատկերագրություն։
3. Հին Միջագետքի արվեստը քաղաք-պետությունների համատեքստում։
4. Էգեյան մշակույթ. հիմնական կենտրոնները և դրանց առանձնահատկությունները
5. Հին Հունաստանի արվեստ. պատմական փուլերը և դրանց տարբերությունները, գեղարվեստական արտահայտչամիջոցները, արժեհամակարգային հիմնական շեշտադրումները։
6. Հին Հռոմի արվեստ. թագավորական, հանրապետական և կայսերական շրջանների առանձնահատկությունները, գեղարվեստական և աշխարհայացքային հիմնական սկզբունքները։
7. Վաղքրիստոնեական շրջանի արվեստի աշխարհագրությունը, արտահայտչամիջոցները և կարևոր հուշարձանները։
8. Բյուզանդական արվեստի գեղագիտությունը և պատկերագրությունը։
9. Բյուզանդական արվեստի ազդեցության գոտիները. Հին Ռուսիա, Բալկաններ, Կովկաս։
10. Կովկասյան երկրների քրիստոնեական արվեստը բյուզանդական և իրանական մշակույթների միջև։
11. Իսլամական արվեստ. ընդհանուր բնութագրություն, ակունքները, ճյուղերը, աշխարհագրական ու էթնիկական ընդգրկումը։

12. Հեռավորարևելյան երկրների արվեստը մ.թ. IV-XIV դդ.. աշխարհագրություն, գեղագիտական հայեցակարգեր, կարևոր հուշարձաններ։
13. Աֆրիկայի արվեստները. հիմնական կենտրոնները, արտահայտչամիջոցներն ու կապը հավատալիքների հետ։
14. Հյուսիսային Ամերիկայի ժողովուրդների արվեստը IV-XV դդ.. ընդհանուր վերլուծություն, կարևոր հուշարձաններ։
15. Արևմտյան Եվրոպայի արվեստը միջնադարում. երկրները, ոճական փուլերը, պատկերագրական առանձնահատկությունները։
16. Իտալական Վերածնունդ. արվեստային երևույթի և դրա գաղափարաբանության վերլուծություն, փուլային բաժանումներ, հիմնական կենտրոններ։
17. Բարձր Վերածննդի վարպետների ստեղծագործությունները, ոճապատկերային առանձնահատկությունները, թեմատիկ նախասիրությունները։ Ակադեմիայի ծնունդը։
18. Նիդերլանդական նատուրալիզմը և կապը իտալական Վերածննդի հետ. նորարար արվեստագետներ և հիմնարար ստեղծագործություններ։
19. Հիերոնիմուս Բոսխ և Պիտեր Բրոյգել. համեմատական վերլուծություն։
20. Գերմանական նատուրալիզմ. ընդհանուր վերլուծություն, կապը նիդերլանդական և իտալական արվեստի հետ, նորարար արվեստագետներ և հիմնարար ստեղծագործություններ։
21. Ալբրեխտ Դյուրեր և Հանս Հոլբայն. համեմատական վերլուծություն։
22. Մանիերիզմ, բարոկկո և ռոկոկո ուղղությունների վերլուծություն։
23. Արևմտաեվրոպական արվեստը 17-րդ դարում. գեղագիտական, ոճական և արտահայտչամիջոցների վերլուծություն, կարևոր վարպետներ և ստեղծագործություններ։
24. Կարավաջո և կարավաջիզմ։
25. Պիտեր-Պաուլ Ռուբենս և Ռեմբրանդտ Հարմենսզոն Վան Ռեյն. համեմատական վերլուծություն։
26. 17-րդ դարի հոլանդական ժանրային նկարչություն. գեղարվեստական և գաղափարական վերլուծություն։
27. Էլ Գրեկո և Դիեգո Վելասկեզ. համեմատական վերլուծություն։
28. Ֆրանսիական կլասիցիզմ. գլխավոր վարպետները և նրանց դպրոցները։
29. 17-18-րդ դարերի անգլիական արվեստի ընդհանուր վերլուծություն, կարևոր անուններ։
30. Եվրոպական արվեստի արձագանքները 18-դարի Ռուսաստանում։

31. Ֆրանսիական հեղափոխության արձագանքները 18-ի վերջի և 19-ի առաջին կեսի արևմտաեվրոպական և ռուսական արվեստում. թեմաներ, անուններ, ստեղծագործություններ։
32. «Ռոմանտիզմ» և «ռեալիզմ» ոճական ուղղությունների դրսևորումները Անգլիայում, Ֆրանսիայում և Ռուսաստանում։
33. Գուստավ Կուրբե և Օնորե Դոմիե. համեմատական վերլուծություն։
34. 19-րդ դարի ռուսական արվեստ. ժանրեր, հոսանքներ, անուններ և ստեղծագործություններ։
35. «Իմպրեսիոնիզմը» որպես արվեստային նոր գաղափար և մեթոդ, կարևոր վարպետներ, խորհրդանշային ստեղծագործություններ։
36. Կլոդ Մոնե և Օգյուստ Ռոդէն. համեմատական վերլուծություն։
37. Պոստիմպրեսիոնիզմ. առանձնահատկությունը, նշանակությունը, առանցքային արվեստագետները։
38. Գեղարվեստական մոդեռնիզմ. բնույթը, գաղափարները, շրջադարձային դերը։
39. Մատիս և Պիկասսո. համեմատական վերլուծություն։
40. Վերացական արվեստ. ակունքներ, հայեցակարգեր, միտումներ։
41. Պատմական ավանգարդները Եվրոպայում և Ռուսաստանում. արվեստի նոր կարգավիճակը, արվեստի հաղթահարման օրակարգը։
42. Միջպատերազմյան արդի արվեստը Եվրոպայում և ԱՄՆ-ում, 1918-1939 թթ.. հիմնական ուղղություններն ու արվեստագետները, առանձնահատկությունը։
43. Արդի արվեստը Երկրորդ Աշխարհամարտից հետո. բարձր մոդեռնիզմ և հակազդեցություններ։
44. Նոր ավանգարդները ԱՄՆ-ում և Եվրոպայում. մոդեռնիզմի հաղթահարումը և արվեստի նոր միջնոցները։
45. Կոնցեպտուալ արվեստ և պոստմոդեռնիզմ. հայեցակարգը, խնդիրները, զարգացումները։
46. Համաշխարհային ժամանակակից արվեստ. բնութագիրը, օրակարգերը և արվեստագետները։

Հայ արվեստ

47. Հնագույն և հին ժամանակաշրջանների մշակույթները Հայկական լեռնաշխարհում. գլխավոր հնավայրեր, նշանավոր հուշարձաններ։
48. Արարատյան կամ Վանի թագավորության (Ուրարտու) մշակույթն ու արվեստը Թեյշեբաինի և Էրեբունի ամրոց-քաղաքների օրինակով։

49. Հայաստանի արվեստը Երվանդունի և Արտաշիսյան հարստությունների օրոք (աքեմենյան և հելլենիստական շրջաններ)։
50. Գառնու պատմաճարտարապետական հուշարձանը հեթանոսության և քրիստոնեության միջև. պատմամշակութային փուլերը, ամրոցի, տաճարի և պալատական համալիրի վերլուծություն։
51. Վաղքրիստոնեական արվեստի հայկական համատեքստը. ընդհանուր բնութագիր, կենտրոններ, հուշարձաններ։
52. Վաղքրիստոնեական շրջանի հայկական կարևոր եկեղեցիների տիպաբանությունն ու գեղարվեստական հարդարանքը։
53. Զվարթնոցի եկեղեցական համալիրը. պատմական, տիպաբանական և գեղարվեստական վերլուծություն, «զվարթնոցատիպ» հուշարձաններ։
54. Դվին քաղաքը. պատմություն, հնագիտական և ճարտարապետական վերլուծություն, քանդակը, գեղարվեստական խեցեղենը և մետաղագործությունը։
55. Վաղքրիստոնեական հայկական քանդակը։
56. Հայ միջնադարյան գրքարվեստ և մանրանկարչություն. գրչության կենտրոններ, մանրանկարչական դպրոցներ, պատկերագրական և ոճական ուղղությունների համեմատական վերլուծություն։
57. Հայկական եկեղեցիների որմնանկարները VII դ.. պատկերագրական և ոճական ընդհանուր վերլուծություն, կարևոր հուշարձաններ։
58. Հայկական ճարտարապետությունն ու քանդակը թագավորությունների շրջանում (IX-XI դդ)։
59. Հայ միջնադարյան քաղաքներն ու քաղաքային մշակույթը։
60. Վանականությունը և կարևորագույն վանական համալիրները թագավորությունների շրջանում (IX-XI դդ)։
61. Աղթամարի Սուրբ խաչ եկեղեցին. տիպաբանական վերլուծություն, որմնաքանդակները և որմնանկարները։
62. Անի քաղաքը Բագրատունիների շրջանում. մշակույթ, քաղաքաշինական սկզբունքներ, ճարտարապետական հուշարձաններ, մանրանկարչություն, կիրառական արվեստ։
63. Անիի Մայր տաճարը. տիպաբանական և գեղարվեստական վերլուծություն։
64. Հայ միջնադարյան ճարտարապետներ և քարագործ վարպետներ։
65. Հայ մանրանկարչությունը թագավորությունների շրջանում (IX-XI դդ). ընդհանուր բնութագիր, ոճական ուղղություններ, պատկերագրական միտումներ, կարևորագույն հուշարձանները։
66. Անիի XIII դարի ճարտարապետությունը և գլխավոր հուշարձանները։

67. Հայկական եկեղեցիների որմնանկարները X-XI դդ.. պատկերագրական և ոճական ընդհանուր վերլուծություն, կարևոր հուշարձաններ։
68. Հայ միջնադարյան վանքային համալիրները ՀՀ տարածքում. շինարարական և ճարտարապետական սկզբունքներ, ոճական առանձնահատկություններ, կարևորագույն հուշարձաններ։
69. Հայկական եկեղեցիների որմնանկարները XIII դ. պատկերագրական և ոճական ընդհանուր վերլուծություն, կարևոր հուշարձաններ։
70. Հայկական մանրանկարչությունը XII-XIV դդ. պատկերագրական վերլուծություն, դպրոցներ, նշանավոր ծաղկողներ և հայտնի օրինակներ։
71. Հայ մանրանկարչության կիլիկյան դպրոցը։
72. Հայ մանրանկարչության գլաձորյան դպրոցը։
73. Հայկական ուշ միջնադարյան արվեստ և ճարտարապետություն։
74. XVII դարի հայ ճարտարապետությունը. ավանդույթի շարունակության և ոճական նորարարությունների միջև. կենտրոններ, հուշարձաններ։
75. Նոր Ջուղայի եկեղեցիները. ճարտարապետության և ներքին հարդարանքի վերլուծություն։
76. XVII դարի հայ արվեստը արդիականության և ավանդականության միջև. կենտրոններ, հուշարձաններ։
77. XVII դարի հայ մանրանկարչությունը. եվրոպական պատկերագրական ավանդույթի յուրացումը։
78. Հայ հնատիպ գրքերի գեղարվեստական հարդարանքը։
79. 18-րդ դարի հայկական սրբապատկերները: Հովնաթանյանների ընտանիքը։
80. Դիմանկար ժանրի կազմավորումը և գլխավոր վարպետները հայ արվեստում։
81. Հայ և հայազգի ծովանկարիչներ։
82. Գևորգ Բաշինջաղյանը և հայկական բնանկարը։
83. Պատմական ժանրի կազմավորումը և գլխավոր վարպետները հայ արվեստում։
84. «Ազգային ոճի» խնդիրը հայ արվեստագետների բանավեճերում։
85. Եվրոպական ոճական ուղղությունների արձագանքները հայ արդի արվեստում. ընդհանուր վերլուծություն, արվեստագետներ և ստեղծագործություններ։
86. Սոցռեալիզմի հայկական արտահայտությունը. գեղարվեստական վերլուծություն, անվանի արվեստագետներ։
87. Մարտիրոս Սարյանի ստեղծագործական փուլերն ու նշանավոր կտավները։
88. Հակոբ Կոջոյանի գեղանկարչությունը, գրաֆիկան և գրքարվեստը։
89. Գեորգի Յակուլովի ստեղծագործությունը։

90. Երվանդ Քոչարը որպես նորարար և ունիվերսալ արվեստագետ. գեղանկարչություն, քանդակ, գրաֆիկա։
91. Խորհրդահայ քանդակը։
92. Հայ արվեստի «թիֆլիսյան դպրոցը»։
93. 1960-ականների «ազգային մոդեռնիզմը». պատմական և արվեստային ակունքները, անվանի արվեստագետներ և խորհրդանշային ստեղծագործություններ։
94. Մինաս Ավետիսյանը և խորհրդային «գյուղագրական» ուղղությունը։
95. Սփյուռքահայ արվեստը որպես երևույթ և ինքնության խնդիր։
96. Ֆրանսահայ նշանավոր արվեստագետներ։
97. 1970-ական թթ. հայ գեղանկարչությունը։
98. 1970-ական թթ. հայ քանդակը։
99. Ղուկաս Չուբարյանի ստեղծագործությունները։
100. 1980-ական թվականների հայ արվեստագետներ. նոր սերունդ, նոր խնդիրներ։
101. Հայ արվեստը «պերեստրոյկայի» և անկախության շրջանում։
102. Անկախության շրջանի հայ արվեստը. խնդիրներ, միտումներ, հեռանկարներ։